

Կապիտալ
ասեթ
մենեջմենթ

**ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԵՐԻ
ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԱՎԱՐՄԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐ**

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Հաստատված է «Կապիտալ Ասեթ
Մենեջմենթ» ՓԲԸ տնօրենների
խորհրդի՝ 2020 թվականի դեկտեմբերի
4-ի թիվ 2020.04.12-05-L որոշմամբ

Խորհրդի նախագահ՝
Տ. Կարապետյան



ԲԱԺԻՆ Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կանոն 1-1. Կանոնները: Անվանումը

- (ա) Սույն Կանոնները ներառում են «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կառավարվող կամավոր կուտակային կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի փայերի պահառության և ռեեստրավարման Կանոնները՝ դրանց կողիֆիկացիայի նպատակով:
- (բ) Սույն Կանոնների անվանումն է «Կամավոր կուտակային կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի փայերի պահառության և ռեեստրավարման կանոններ»:
- (գ) Սույն Կանոնները կարգավորում են Ընկերության կողմից կառավարվող կամավոր կուտակային կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի փայերի պահառության և ռեեստրավարման կարգն ու պայմանները, ինչպես նաև Ընկերության ու կամավոր կուտակային կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի մասնակիցների փոխհարաբերությունները փայերի թողարկման, փոխանակման, մարման, փոխանցման, տեղեկատվության տրամադրման և պահառության այլ գործառնությունների հետ կապված:

Կանոն 1-2. Կառուցվածքը: Կողիֆիկացիան և հղումները

- (ա) Սույն Կանոնները բաղկացած են հետևյալ բաժիններից՝ Բաժին Ա. Ընդհանուր դրույթներ, Բաժին Բ. Փայերի պահառության և ռեեստրավարման ծառայությունների մատուցման սկզբունքներն ու ընդհանուր կարգը, Բաժին Գ. Կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի փայերի պահառության գործառնությունները, Բաժին Դ. Ներդրումային ֆոնդերի փայերի պահառության գործառնությունները, ու Հավելվածներից: Յուրաքանչյուր Բաժին բաղկացած է Վերնագրերից: Հավելվածները ներառում են սույն Կանոններով պահանջվող ձևերը:
- (բ) Վերնագրերը միավորում են Ընկերության կողմից սահմանված Կանոններն ըստ գործունեության կամ կարգավորման առարկայի: Կանոնների օգտագործման պարզության նպատակով Վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է դրանում միավորված Կանոնների առարկան:
- (գ) Օգտագործման հարմարության և պարզության համար Կանոնները վերնագրվում են և համարակալվում՝ ըստ Վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2-1»-ը նշանակում է երկրորդ Վերնագրի ներքո գործող առաջին Կանոնը):
- (դ) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝
 - (1) Կանոնը բաղկացած է Ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն).
 - (2) Ենթականոնը բաղկացած է Կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող արաբական թվերով (օրինակ՝ (2)).
 - (3) Կետը բաղկացած է Ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ)):
- (ե) Սույն Կանոններում հղումները կատարվում են հետևյալ կարգով՝
 - (1) Վերնագրին հղումը կատարվում է Վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր Կանոնները.
 - (2) Այլ Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «2-3(բ)(5)(Ա) Կանոնի համաձայն» հղումը նշանակում է «2-3 Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետ».
 - (3) Եթե հղում է կատարվում նույն Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին, կամ նույն Ենթականոնի Կետին կամ Ենթակետին, կամ նույն Կետի Ենթակետին, ապա հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «(բ)(5)(Ա) ենթականոնի համաձայն» հղումը նշանակում է «սույն Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետ».
 - (4) Կանոնների որևէ Վերնագրի (Կանոնի, Ենթականոնի, Կետի և այլն) հղում կատարվում է առանց

«Կանոնների» բառերի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին.

(5) Որևէ ձևին հղումը ենթադրում է Կանոնների Հավելվածներում ներառված տվյալ ձևը:

Կանոն 1-3. Կանոնների ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

- (ա) Սույն Կանոնները հաստատվում են «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում խորհրդի կողմից հաստատմանը հաջորդող տասներորդ աշխատանքային օրը:
- (բ) Սույն Կանոնների ուժի մեջ մտնելու պահից՝ ուժը կորցրած են ճանաչվում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ տնօրենների խորհրդի՝ 2017 թվականի հունվարի 30-ի թիվ 2017.30.01-11 որոշմամբ հաստատված Կամավոր կուտակային կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի փայերի պահառության և ռեեստրավարման կանոնները:

Կանոն 1-4. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը

- (ա) Սույն Կանոնները և դրանցով սահմանված Ձևերը ներքին իրավական ակտեր են և ընդունվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի համաձայն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Կանոն 1-5. Հասկացություններ.

- (ա) Կանոնակարգում օգտագործվող հետևյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
 - «**Ընկերություն**».
«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերություն:
 - «**Կենսաթոշակային ֆոնդ**».
ակտիվների ամբողջություն, որը ձևավորվում է մասնակիցների կողմից և(կամ) նրանց օգտին կատարված կամավոր կուտակային վճարներից և դրանց ներդրման հաշվին ստացված միջոցներից:
 - «**Ներդրումային ֆոնդ**».
ակտիվների ամբողջություն, որը ձևավորվում է՝ որպես նպատակ ունենալով ներդրողներից հավաքագրված միջոցները միասնական ներդրումային քաղաքականության ներքո արժեթղթերում և (կամ) այլ ակտիվներում կոլեկտիվ ներդրումներ կատարելու միջոցով ապահովել դրանց վերադարձը ներդրողներին կապիտալի ավելացման տեսքով:
 - «**Ֆոնդեր**».
կամավոր կուտակային կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի համատեղ նշում:
 - «**Կենսաթոշակային հովանավոր**».
կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին ի օգուտ աշխատողների մասնակցող գործատու կամ այլ անձ, որն աշխատողների անունից և(կամ) օգտին կատարում է կամավոր կուտակային վճարումներ:
 - «**Մասնակից**».
անձ, որը ցանկանում է ձեռք բերել ֆոնդի փայ կամ ֆոնդի թողարկված փայերի սեփականատեր է:
 - «**Փայ**».
արժեթուղթ, որը հավաստում է Մասնակցի՝ ֆոնդի ակտիվներում փայամասնակցության իրավունքը:
 - «**Կամավոր կուտակային կենսաթոշակ**».
կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմայով վճարվող լրացուցիչ կենսաթոշակ:

«Կենսաթոշակային հաշիվ».

Ընկերության մոտ բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի մասնակցի փայերը և որտեղ արտացոլվում են մասնակցի փայերով կատարվող գործառնությունների արդյունքները, ժամկետները և սույն Կանոններով ու օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

«Արժեթղթերի հաշիվ».

Ընկերության մոտ բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են ներդրումային ֆոնդի մասնակցի փայերը և որտեղ արտացոլվում են մասնակցի փայերով կատարվող գործառնությունների արդյունքները, ժամկետները, փայերի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ և Կանոններով ու օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

«Պահառու».

բանկ, որտեղ պահվում և հաշվառվում են ֆոնդերի ակտիվները:

«Տարանցիկ հաշիվ».

բանկային հաշիվ, որտեղ մուտքագրվում է մասնակիցների վճարների գումարը՝ հետագայում այն ֆոնդերի հաշիվներին փոխանցելու նպատակով:

«Լիազորված անձ».

ա) իրավաբանական անձի պաշտոնատար անձ, որն իրավունք ունի գործելու իրավաբանական անձի անունից առանց լիազորագրի, բ) անձ, որը լիազորագրի հիման վրա Մասնակցի կողմից լիազորված է կատարել գործողություններ փայերի հետ և ստանալ տեղեկատվություն. գ) Մասնակցի օրինական ներկայացուցիչներ (ծնողներ, ժառանգներ, խնամակալներ, հոգաբարձուներ, որդեգրողներ), դ) պետական լիազորված մարմինների ներկայացուցիչներ, որոնք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով իրավունք ունեն Ընկերությունից պահանջելու որոշակի գործողությունների իրականացում:

«Կենտրոնական բանկ».

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

«Իրավասու մարմին».

Ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում բաժնետերերի ընդհանուր ժողով կամ տնօրենների խորհուրդ:

«Նույնականացում».

մասնակցի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից Ընկերությանը ներկայացված փաստաթղթերում պարունակվող որոշակի տեղեկությունների համադրման միջոցով անձի ինքնության հաստատման գործընթաց:

«Պահառության գործառնություն».

Ընկերության գործողությունների ամբողջություն, որի արդյունքում փոփոխություններ են կատարվում մասնակցի կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվներում և(կամ) մշակվում ու տրամադրվում է տեղեկատվություն այն ստանալու իրավունք ունեցող անձանց:

«Թողարկում».

մասնակցի և(կամ) նրա օգտին կատարվող վճարների հիման վրա Ընկերության կողմից փայերի համախմբի ձևավորման և մասնակցի կենսաթոշակային և(կամ) արժեթղթերի հաշվում դրանց մուտքագրման գործառնություն:

«Փոխանակում».

մասնակցի կողմից ներկայացված հայտի հիման վրա ֆոնդերի տարբեր տեսակների փայերի (դասերի) փոխանակման գործառնություն:

«Փոխանցում».	հանձնարարագրի հիման վրա կենսաթոշակային կամ արժեթղթերի մի հաշվից մյուսին փայերի փոխանցում:
«Մարում».	մասնակցի կողմից ներկայացված հայտի հիման վրա ֆոնդերի տարբեր տեսակների/դասերի փայերի հետզնման միջոցով մարման գործառնություն:
«Տեղեկատվական գործառնություն».	կենսաթոշակային և արժեթղթերի հաշիվների վերաբերյալ քաղվածքների, հաշվետվությունների, տեղեկանքների կամ այլ փաստաթղթերի կազմման և տրամադրման գործառնություն:
«Հայտ/Հանձնարարագիր/Դիմում».	սույն Կանոններով նախատեսված պահանջների պահպանմամբ, Ընկերության համար ընդունելի ձևով և բովանդակությամբ կազմված փաստաթուղթ, որը ներկայացվում է Ընկերությանը փայերի ռեեստրավարման գործառնություններ կատարելու համար:
«Կենսաթոշակային/արժեթղթերի հաշվից քաղվածք».	փաստաթուղթ, որը տրվում է Ընկերության կողմից և հավաստում է դրանում նշված անձի որոշակի դասի և քանակի փայերի սեփականատեր լինելու փաստը, ինչպես նաև տեղեկություններ է պարունակում ֆոնդերի եկամտաբերության վերաբերյալ՝ որոշակի ամսաթվի դրությամբ:
«Փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանցում, տրամադրում».	որևէ իրավասու էլեկտրոնային հասցեից կամ ընկերության վեբկայքի միջոցով մասնակցի (նրա լիազոր ներկայացուցչի), կենսաթոշակային գործակալի հայտերի (հարցումների) էլեկտրոնային եղանակով փոխանցում Ընկերության իրավասու էլեկտրոնային հասցեին կամ Ընկերությանը, ինչպես նաև Ընկերության իրավասու էլեկտրոնային հասցեից կամ վեբկայքի միջոցով փաստաթղթի (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով տրամադրում համապատասխան հայտը և (կամ) հարցումը ներկայացնողին:
«Օր» կամ «Գործառնական օր».	աշխատանքային և բանկային օր:
«Ծրագրային համակարգ».	Ընկերության կողմից օգտագործվող համակարգչային ծրագիր, որի միջոցով իրականացվում է փայերի պահառության և ռեեստրավարման ծառայությունների մատուցումը:

ԲԱԺԻՆ Բ. ՓԱՅԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԱՎԱՐՄԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

Կանոն 2-1. Ընդհանուր դրույթներ փայերի պահառության և ռեեստրավարման ծառայությունների վերաբերյալ

- (ա) Փայերի պահառության և ռեեստրավարման շրջանակներում Ընկերությունը մատուցում է հետևյալ ծառայությունները՝
- (1) բացում և վարում է մասնակիցների կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվներ՝ գրանցելով դրանց հետ կապված յուրաքանչյուր փոփոխության ժամկետն ու էական պայմանները.
 - (2) Պահառուի հետ համատեղ և սույն Կանոններով սահմանված ժամկետում ու կարգով կազմակերպում է ֆոնդերի փայերի թողարկումը, դրանց մուտքագրումը կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվներին.
 - (3) Պահառուի հետ համատեղ, Մասնակցի հայտի հիման վրա և սույն Կանոններով սահմանված ժամկետում ու կարգով կազմակերպում է մեկ ֆոնդի փայերի փոխանակումը մեկ այլ ֆոնդի փայերով կամ միևնույն ֆոնդի այլ դասի փայերով.
 - (4) Պահառուի հետ համատեղ, Մասնակցի հայտի հիման վրա և սույն Կանոններով սահմանված ժամկետում ու կարգով կազմակերպում է ֆոնդերի մասնակիցների փայերի մարումը.
 - (5) Պահառուի հետ համատեղ և սույն Կանոններով սահմանված ժամկետում ու կարգով կազմակերպում է ֆոնդերի մասնակիցներին հասանելիք վճարների կատարումը.
 - (6) ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոններով սահմանված ժամկետում և կարգով կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվների վերաբերյալ տրամադրում է տեղեկատվություն.
 - (7) իրականացնում է ՀՀ օրենսդրությունից, սույն Կանոններից և ֆոնդերի կանոններից բխող այլ գործառույթներ:

Կանոն 2-2. Պահառության և ռեեստրավարման ծառայությունների մատուցման սկզբունքները

- (ա) Ընկերությունը կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվների հետ գործառնություններ է կատարում միայն դրանք կատարելու համար հիմք հանդիսացող ու սույն Կանոններով նախատեսված փաստաթղթերի առկայության դեպքում:
- (բ) Ընկերությունը փայերի պահառության և ռեեստրավարման ծառայություններ մատուցելիս ապահովում է իր և մասնակիցներին պատկանող փայերի նկատմամբ իրավունքների, ինչպես նաև յուրաքանչյուր մասնակցի պատկանող փայերի նկատմամբ իրավունքների առանձնացված հաշվառումը՝ յուրաքանչյուր մասնակցի համար բացելով առանձին հաշիվ:
- (գ) Ընկերությունն ապահովում է կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը: Նման տեղեկատվություն են համարվում հետևյալ տեղեկությունները.
- (1) մասնակցի մասին տեղեկությունները,
 - (2) կենսաթոշակային/արժեթղթերի հաշվի վերաբերյալ ցանկացած տեղեկություն,
 - (3) մասնակցի փայերի հետ կատարվող գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները,
 - (4) այլ տեղեկությունները, որոնց գաղտնի լինելու վերաբերյալ առկա է մասնակցի գրավոր դիմումը:
- (դ) Մասնակցի կենսաթոշակային/արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են միայն մասնակցին, նրա լիազորված ներկայացուցչին, ՀՀ պետական մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ նրանց լիազորությունների շրջանակում, Պահառուին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց:
- (ե) Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ, ապա Ընկերությունն իրավունք ունի ծառայողական տեղեկատվությունը բացահայտել երրորդ անձանց՝ մասնակցի գրավոր համաձայնության դեպքում:

- (գ) Կենսաթոշակային/արժեթղթերի հաշվից տեղեկատվություն տրամադրելու համար հիմք են հանդիսանում ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոններով և այլ իրավական ակտերով պահանջվող փաստաթղթերը:
- (ե) Հայտը (հանձնարարականը) պետք է լինի գրավոր (թղթային կամ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով): Ընկերությունը էլեկտրոնային հայտեր կարող է ընդունել էլեկտրոնային հարթակի (սեփական համացանցային կայքի, էլեկտրոնային հավելվածի միջոցով և (կամ) էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով): Հայտը (հանձնարարականը) համարվում է գրավոր ձևով ներկայացված էլեկտրոնային հարթակ համապատասխանաբար մուտք գործելու, օգտագործելու, ներբեռնելու կամ էլեկտրոնային հարթակում համապատասխան տվյալների մուտքագրման միջոցով: Էլեկտրոնային հարթակի միջոցով հայտ (հանձնարարական) ընդունելիս պետք է պատշաճ կերպով ապահովվի հայտը (հանձնարարականը) ներկայացրած անձի կամ նրա լիազորված անձի նույնականացումը և հայտը (հանձնարարականը), ինչպես նաև այլ հաղորդագրությունները (փաստաթղթերը) պահպանելու, անփոփոխ կերպով վերարտադրելու հնարավորությունները: Ընկերությունը հայտ (հանձնարարական) կարող է ընդունել նաև որևէ իրավասու էլեկտրոնային հասցեից իր իրավասու էլեկտրոնային հասցեին:
- (ը) Հայտը ենթակա է կատարման հայտի ու գործառնության կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ընդունման պահից ոչ ուշ, քան հայտի տրմանը հաջորդող 3 օրվա ընթացքում, եթե սույն Կանոններով և Ընկերության ներքին իրավական ակտերով չի նախատեսվում այլ ժամկետ:
- (թ) Հայտերը ենթակա են կատարման ըստ դրանց ընդունման հերթականության:
- (ժ) Եթե մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտը ստորագրում է՝
- (1) այդ անձը, եթե անձը գործունակ է, կամ նրա լիազորված ներկայացուցիչը,
 - (2) տասնչորս տարեկան չդարձած անչափահաս անձի ծնողները, որդեգրողները կամ խնամակալները,
 - (3) տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս անձը՝ այդ անձի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության դեպքում,
 - (4) տասնութ տարեկանից բարձր և դատարանի վճռով սահմանափակ գործունակ ճանաչված անձի հոգաբարձուն,
 - (5) դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձի խնամակալը:
- (ժա) Եթե ֆիզիկական անձ հանդիսացող մասնակիցը ֆիզիկական արատների, հիվանդության կամ որևէ այլ պատճառով չի կարող անձամբ ստորագրել հայտը, ապա նրա հանձնարարությամբ և ներկայությամբ հայտը կարող է ստորագրվել մեկ այլ ֆիզիկական անձի կողմից, որի դեպքում հայտում նշվում է մասնակցի կողմից ստորագրման անհնարինության պատճառը:
- (ժբ) Եթե մասնակիցն իրավաբանական անձ է, ապա հայտը ստորագրում է իրավաբանական անձի կանոնադրությամբ և/կամ ներքին իրավական ակտերով նման իրավասությամբ օժտված անձը:
- (ժգ) Կենսաթոշակային հովանավորի կողմից ներկայացված հանձնարարականը ստորագրում է կենսաթոշակային հովանավորի կանոնադրությամբ և/կամ ներքին իրավական ակտերով նման իրավասությամբ օժտված անձը:
- (ժդ) Հայտը ստորագրող անձի նույնականացումն իրականացվում է կենսաթոշակային/արժեթղթերի հաշվում և ներկայացվող փաստաթղթերում նրա վերաբերյալ ներառված տեղեկությունների համադրման միջոցով:
- (ժե) Հայտի ընդունումը և կատարումն իրականացվում է Ֆոնդերի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում:
- (ժզ) Ընկերությունը մերժում է հայտի կատարումը, եթե՝
- (1) հայտը չի բավարարում սույն Կանոններով հայտի բովանդակությանը ներկայացվող պահանջներին,
 - (2) հայտով պահանջվում է այնպիսի գործառնության կատարում, որի իրականացումը սահմանված չէ օրենքով և սույն Կանոններով,

- (3) հայտի կատարումը կհանգեցնի ՀՀ օրենսդրության պահանջների խախտման,
- (4) հայտի հետ ներկայացված չեն գործառնության կատարման համար օրենքով և սույն Կանոններով պահանջվող փաստաթղթերը,
- (5) այլ հիմքերի առկայության դեպքում:
- (ժէ) Հայտի մերժումը կատարվում է գրավոր ձևով՝ գործառնության չկատարման վերաբերյալ հաշվետվություն կազմելով և նշելով հայտի կատարման մերժման պատճառները և դրանց վերացմանն ուղղված առաջարկվող միջոցները:
- (ժը) Ընկերության կողմից գրավոր ձևով մերժված հայտը համարվում է անվավեր և չի կարող հանդիսանալ գործառնությունների կատարման հիմք:
- (ժթ) Հայտի չեղյալ ճանաչումը կատարվում է հայտի ճշգրտման կամ ամբողջությամբ մերժման նպատակով: Չեղյալ կարող է ճանաչվել միայն չկատարված գործառնության հայտը: Չկատարված գործառնությունն այն գործառնությունն է, որի իրականացման նպատակով Ընկերության կողմից ընդունվել և գրանցվել է համապատասխան հայտ, սակայն Ընկերությունը կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվների հետ դեռևս չի կատարել փոփոխություններ: Հայտի չեղյալ ճանաչումը կատարվում է գործառնությունը նախաձեռնողի հայտի հիման վրա: Գործառնության չեղյալ ճանաչման մասին հայտը կատարվում է հայտը ստանալու օրվան հաջորդող Գործառնական օրը:
- (ի) Կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվի հետ յուրաքանչյուր գործառնության կատարման ավարտին կազմվում է գործառնության կատարման հաշվետվություն (ըստ անհրաժեշտության) կամ մերժման մասին տեղեկատվություն:
- (իա) Հաշվետվությունների վավերապայմանները թույլ են տալիս միանշանակ բացահայտել գործառնության նկարագիրը և արդյունքը:
- (իբ) Ընկերության կողմից հաշվետվությունները սույն Կանոններով նախատեսված կարգով տրամադրվում են գործառնության կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում՝ Մասնակցի քարտում նշված եղանակով:

Կանոն 2-3. Փայերի պահառության և ռեեստրավարման հաշվառման գրքերը

- (ա) Փայերի պահառության և ռեեստրավարման հաշվառման գրքեր են հանդիսանում փայերի հաշվառման համար անհրաժեշտ այն փաստաթղթերը, որոնք նախատեսված են փայերի, նրանց սեփականատերերի վավերապայմանների ընթացիկ վիճակը և պահառության գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գործողությունները ֆիքսելու համար:
- (բ) Փայերի պահառության հաշվառման գրքերն են՝
 - (1) Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների հաշվառման մատյանը (Ձև 2-1),
 - (2) Կենսաթոշակային ֆոնդի փայերով կատարված գործառնությունների գրանցամատյանը (ըստ հաճախորդների) (Ձև 2-2),
 - (3) Ներդրումային ֆոնդի մասնակիցների հաշվառման մատյանը (Ձև 2-3),
 - (4) Ներդրումային ֆոնդի փայերով կատարված գործառնությունների գրանցամատյանը (ըստ հաճախորդների) (Ձև 2-4),
 - (5) Արգելադրված (գրավադրված) փայերի գրանցամատյանը (Ձև 2-4.1):
- (գ) Փայերի պահառության և ռեեստրավարման հաշվառման գրքերը վարվում են էլեկտրոնային եղանակով:

Կանոն 2-4. Ծճգրտման գործառնություն

- (ա) Ծճգրտման գործառնությունը կենսաթոշակային/արժեթղթերի հաշիվի ճճգրտման (ուղղման) գործառնությունների իրականացումն է:
- (բ) Չի թույլատրվում սխալ գործառնության չեղյալ ճանաչումը:

- (գ) Ընկերության մեղքով թույլ տրված սխալների վերացման համար գործառնությունները կատարվում են առանց մասնակցի լրացուցիչ հայտի: Ճշգրտման գործառնությունը կատարվում է սխալի բացահայտման պահին կազմված ակտի հիման վրա, սխալի բացահայտման օրը:
- (դ) Մասնակցի կողմից տրված սխալ հայտերի հիման վրա կատարված գործառնության ճշգրտումը կատարվում է ճշգրտված հայտի հիման վրա, գործառնության կատարման ընդհանուր կարգով:

Կանոն 2-5. Մասնակցի լիազորված ներկայացուցչի լիազորությունների գրանցում

- (ա) Լիազորված ներկայացուցչի լիազորությունների տրման կամ դադարեցման գործառնությունների նախաձեռնությունը պատկանում է մասնակցին: Մասնակիցը կարող է նշանակել լիազորված մի քանի ներկայացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում սահմանափակելով նրանց լիազորությունները:
- (բ) Լիազորված ներկայացուցիչ գրանցելու համար Ընկերություն են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝
 - (1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր,
 - (2) Լիազորված ներկայացուցչի ինքնությունը հաստատող փաստաթուղթ,
 - (3) Անհրաժեշտության դեպքում նաև Մասնակցին նույնականացնող փաստաթղթեր:
- (գ) Մասնակցի լիազորված ներկայացուցչի լիազորությունների ժամկետը սահմանվում է լիազորագրով:
- (դ) Լիազորագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել լիազորված ներկայացուցչի լիազորությունները դադարեցնելու մասին Ընկերություն Մասնակցի կողմից գրավոր դիմում ներկայացնելու միջոցով:
- (ե) Լիազորագրի ժամկետի ավարտից հետո Ընկերություն է ներկայացվում նոր լիազորագիր:

Կանոն 2-6. Տեղեկությունների պահպանությունը ապահովող միջոցառումներ

- (ա) Փայերի պահառության և ռեեստրավարման ծառայությունների շրջանակներում գործառնությունների կատարման և ձևակերպման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը կարող են կազմվել թղթային կամ էլեկտրոնային տեսքով:
- (բ) Ընկերությունն ապահովում է փաստաթղթերի պահպանման համար բոլոր անհրաժեշտ պայմանները. իրականացնում է փայերի էլեկտրոնային հաշվառման համակարգում պահպանվող տեղեկությունների կրկնօրինակում և ապահովում տեղեկատվության անվտանգ պահպանում:
- (գ) Ընկերությունը կիրառում է փայերի էլեկտրոնային հաշվառման պահուստային համակարգ:
- (դ) Յուրաքանչյուր շաբաթվա վերջին Գործառնական օրվա վերջի դրությամբ Ընկերությունն իրականացնում է այդ շաբաթվա տվյալների բազայի կրկնօրինակում սկավառակի վրա: Կրկնօրինակները պահպանվում են Ընկերության տարածքում գտնվող չիրկիզվող պահարաններում:
- (ե) Յուրաքանչյուր ամսվա տվյալների բազան հաջորդ ամսվա առաջին 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում պահպանության (ի պահ) է հանձնվում Ընկերության կողմից ընտրված բանկի մագնիսակայուն պահոցում:

ԲԱԺԻՆ Գ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՓԱՅԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳ

Կանոն 3-1. Կենսաթոշակային հաշվի բացման և կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ընտրության կարգը

- (ա) Կենսաթոշակային հաշվի բացումը կենսաթոշակային փայերի հաշվառման համակարգ մասնակցի, այդ թվում՝ կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ընտրության մասին ամփոփ տեղեկությունների մուտքագրումն է:
- (բ) Յուրաքանչյուր մասնակցի համար բացվում է կենսաթոշակային մեկ հաշիվ, որին շնորհվում է եզակի հաշվեհամար:
- (գ) Կենսաթոշակային հաշիվ կարող է բացել՝
 - (1) Մասնակիցը կամ նրա կողմից լիազորված անձը,
 - (2) Կենսաթոշակային հովանավորը:
- (դ) Կենսաթոշակային հաշիվը բացվում և կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը կատարվում է գրավոր դիմումի (Ձև 3-1) հիման վրա՝ հետևյալ փաստաթղթերի ներկայացմամբ.

(1) Ֆիզիկական անձի համար

- 1) Մասնակցի անձը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 2) ՀՀ ռեզիդենտ մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստվող տեղեկանքի պատճենը, ոչ ռեզիդենտ մասնակցի դեպքում՝ անձին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),
- 3) լիազորված անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը և լիազորված անձի՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը:

(2) Անհատ ձեռնարկատիրոջ համար

- 1) Մասնակցի անձը հավաստող փաստաթղթի պատճենը,
 - 2) Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը,
 - 3) Հարկ վճարողի հաշվարկային համարը (եթե պետական գրանցումը հավաստող փաստաթուղթը նշված տեղեկատվությունը չի պարունակում),
 - 4) Մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենը,
 - 5) լիազորված անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը և լիազորված անձի՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը:
- (ե) Եթե Ընկերությանն արդեն իսկ ներկայացվել են կենսաթոշակային հաշվի բացման համար սույն Կանոններով նախատեսված փաստաթղթերը կամ դրանց մի մասը, ապա Ընկերության մոտ առկա փաստաթղթերի կրկնակի ներկայացում չի պահանջվում:
- (զ) Կենսաթոշակային հաշվի բացման իրավասություն ունեցող անձը պարտավոր է ողջամիտ ժամկետներում Ընկերությանը ներկայացնել կենսաթոշակային հաշվի բացման համար ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխություններն ու լրացումները: Նշված փոփոխությունների մասին չտեղեկացնելու դեպքում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Մասնակցի քարտում սխալ գրառումների, մասնակցի կողմից հաշվեկազմությունները չստանալու, ինչպես նաև դրանց հետևանքով մասնակցին պատճառված վնասի համար:
- (է) Ընկերությունը կենսաթոշակային հաշիվը բացում է սույն Կանոններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

- (ը) Ընկերության կողմից կենսաթոշակային հաշիվ բացելու և ֆոնդի ընտրության փաստը հավաստվում է Մասնակցի քարտով (Ձև 3-2), որը տրամադրվում է Մասնակցին կենսաթոշակային հաշիվը բացելու պահին:
- (թ) Կենսաթոշակային հովանավորի դիմումի (Ձև 3-3) հիման վրա Ընկերությունը կատարում է վերջինիս գրանցումը: Դիմումի հետ մեկտեղ Կենսաթոշակային հովանավորը ներկայացնում է իր պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը, հարկ վճարողի հաշվարկային համարը բովանդակող փաստաթղթի պատճենը (եթե պետական գրանցումը հավաստող փաստաթուղթը նշված տեղեկատվությունը չի պարունակում), առանց լիազորագրի իր անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը: Գրանցման արդյունքում Կենսաթոշակային հովանավորին տրամադրվում է Կենսաթոշակային հովանավորի քարտ (Ձև 3-4):

Կանոն 3-2. Կենսաթոշակային փայերի թողարկման կարգը

- (ա) Կենսաթոշակային փայերի թողարկումը կատարվում է կենսաթոշակային փայերի Ձեռքբերման հայտի հիման վրա:
- (բ) Կենսաթոշակային փայերի Ձեռքբերման հայտ ներկայացնելու իրավասություն ունեն՝
 - (1) Մասնակիցը կամ նրա լիազորված անձը (Ձևեր 3-5, 3-5.1).
 - (2) Կենսաթոշակային հովանավորը (Ձև 3-6):
- (գ) Կենսաթոշակային փայերի Ձեռքբերման հայտը ստանալիս Ընկերությունը՝
 - (1) նույնականացնում է հայտը ներկայացնող անձին,
 - (2) հայտում մասնակցի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը համեմատում է Ընկերությունում առկա տեղեկատվության հետ,
 - (3) հայտում նշված կուտակային վճարի չափը համեմատում է Պահառուից ստացված փաստացի վճարի մասին տեղեկատվության հետ:
- (դ) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 3-7):
- (ե) Ռեեստրավարման պատասխանատու աշխատակիցը տեղեկանում է տարանցիկ հաշվին կատարված վճարների վերաբերյալ:
- (զ) Փայերի թողարկման և կենսաթոշակային հաշվում դրանց մուտքագրման վերաբերյալ մասնակցին՝ վերջինիս պահանջով տրամադրվում է կենսաթոշակային փայերի թողարկման հաշվետվություն (Ձև 3-8):
- (է) Փայերի թողարկման վերաբերյալ հաշվետվություն է (Ձև 3-9) տրամադրվում նաև Պահառուին:
- (ը) Ֆոնդի կառավարիչները յուրաքանչյուր օրվա վերջում ծանոթանում են փայերի թողարկման վերաբերյալ հայտի ընդունման և տարանցիկ հաշվին փոխանցված միջոցների մասին տեղեկատվությանը:

Կանոն 3-3. Կենսաթոշակային փայերի փոխանակման կարգը

- (ա) Մասնակիցն իրավունք ունի կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակել Ընկերության կամ այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով:
- (բ) Մասնակցի փայերի փոխանակումը Ընկերության կողմից կառավարվող այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով կատարվում է կենսաթոշակային փայերի փոխանակման հայտի (Ձև 3-10) հիման վրա:
- (գ) Մասնակցի պահանջով իր փայերի փոխանակումը այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով կատարվում է 3-4 Կանոնով նախատեսված կարգով:
- (դ) Կենսաթոշակային փայերի փոխանակման հայտ կարող է ներկայացնել մասնակիցը կամ նրա լիազորված անձը:

- (ե) Կենսաթոշակային փայերի փոխանակման հայտը ստանալիս Ընկերությունը՝
 - (1) նույնականացնում է հայտը ներկայացնող անձին,
 - (2) հայտում մասնակցի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը համեմատում է Ընկերությունում առկա տեղեկատվության հետ:
- (զ) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 3-11):
- (է) Փայերի փոխանակման վերաբերյալ մասնակցին տրամադրվում է կենսաթոշակային փայերի փոխանակման հաշվետվություն (ըստ անհրաժեշտության) (Ձև 3-12) և Մասնակցի քարտ (Ձև 3-2)՝ սույն կանոններով նախատեսված կարգով:
- (ը) Փայերի փոխանակման վերաբերյալ հաշվետվություն է (Ձև 3-13) տրամադրվում նաև Պահառուին:
- (թ) Ֆոնդի կառավարիչները յուրաքանչյուր օրվա վերջում տեղեկանում են փոխանակման ներկայացված փայերի քանակի վերաբերյալ տեղեկատվությանը:

Կանոն 3-4. Կենսաթոշակային փայերի մարման կարգը

- (ա) Կենսաթոշակային փայերի մարումը կատարվում է՝
 - (1) մասնակցի պահանջով իր փայերը այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում.
 - (2) մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում.
 - (3) մասնակցին օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչելու դեպքում.
 - (4) մասնակցի ծայրահեղ ծանր վիճակում գտնվելու և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ լինելու դեպքում.
 - (5) Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ մշտական բնակության նպատակով արտասահման մեկնելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից հրաժարվելու դեպքում.
 - (6) Հայաստանում աշխատող օտարերկրացիների՝ իրենց մշտական բնակության երկիր վերադառնալու դեպքում.
 - (7) կենսաթոշակային ֆոնդի դադարեցման (լուծարման) դեպքում:
- (բ) Կենսաթոշակային փայերի մարման հայտը (Ձև 3-14) ներկայացնում է մասնակիցը կամ նրա լիազորված անձը:
- (գ) 3-4 (ա) (1) ենթականոնով սահմանված իրավունքը մասնակիցը ձեռք է բերում, եթե մասնակցի կողմից Ֆոնդին առաջին Կուտակային վճարի կատարման օրվանից անցել է առնվազն երկու տարի: Իսկ կենսաթոշակային հովանավորով մասնակցի համար առկա է նաև հետևյալ պայմաններից որևէ մեկը.
 - (1) լուծվել է Կենսաթոշակային հովանավորի և մասնակցի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը.
 - (2) դադարեցվել է Կենսաթոշակային հովանավորի և Ընկերության միջև կնքված համապատասխան պայմանագիրը.
 - (3) Կենսաթոշակային հովանավորը լուծարվել է:
- (դ) 3-4 (գ) (1) ենթականոնով սահմանված դեպքում մասնակիցը կամ Կենսաթոշակային հովանավորը փայերի մարման հայտի հետ ներկայացնում է նաև Կենսաթոշակային հովանավորի հետ աշխատանքային պայմանագրի լուծումը հավաստող փաստաթուղթ (հրաման, համաձայնագիր):
- (ե) 3-4 (ա) (3) և (4) ենթականոններով սահմանված դեպքերում մասնակիցը փայերի մարման հայտի հետ ներկայացնում է նաև բժշկատոցիական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանքը:

- (գ) 3-4 (ա) (5) ենթականոնով սահմանված դեպքում մասնակիցը փայերի մարման հայտի հետ ներկայացնում է նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կամ ՀՀ արտաքին գործերի նախարարության ծանուցումը՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու ՀՀ Նախագահի հրամանագրի վերաբերյալ:
- (ե) 3-4 (ա) (6) ենթականոնով սահմանված դեպքում մասնակիցը փայերի մարման հայտի հետ ներկայացնում է նաև իր՝ որպես օտարերկրացու մշտական բնակության երկիր վերադառնալու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերը:
- (ը) Կենսաթոշակային փայերի մարման հայտը և սույն Կանոններով նախատեսված այլ փաստաթղթերը ստանալիս Ընկերությունը՝
- (1) նույնականացնում է հայտը ներկայացնող անձին,
 - (2) հայտում մասնակցի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը համեմատում է Ընկերությունում առկա տեղեկատվության հետ:
- (թ) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 3-15):
- (ժ) Մասնակցի փայերը այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող այլ կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում Ընկերությունը Պահառուի հետ համատեղ կազմակերպում է մասնակցին պատկանող փայերի մարումն ու միջոցների փոխանցումը այլ կենսաթոշակային ֆոնդի պահառուին՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
- (ժա) 3-4 (ա) (2) ենթականոնով սահմանված հիմքով՝ Ընկերությունը փայերի մարման հայտում համապատասխան նշման առկայության դեպքում, Պահառուի հետ համատեղ կազմակերպում է մասնակցին պատկանող փայերի մարումն ու միջոցների փոխանցումը Մասնակցի նշած բանկային հաշվին՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
- (ժբ) 3-4 (ա) (3), (4), (5), (6), (7) ենթականոններով սահմանված դեպքերում Ընկերությունը Պահառուի հետ համատեղ կազմակերպում է մասնակցին պատկանող փայերի մարումն ու միջոցների փոխանցումը Մասնակցի նշած բանկային հաշվին՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
- (ժգ) Փայերի մարման վերաբերյալ մասնակցին՝ վերջինիս պահանջով տրամադրվում է կենսաթոշակային փայերի մարման հաշվետվություն (Ձև 3-16)՝ սույն կանոններով նախատեսված կարգով:
- (ժդ) Փայերի մարման վերաբերյալ հաշվետվություն է (Ձև 3-17) տրամադրվում նաև Պահառուին:
- (ժե) Ֆոնդի կառավարիչները յուրաքանչյուր օրվա վերջում ծանոթանում են մարման ներկայացված փայերի քանակի վերաբերյալ տեղեկատվությանը:
- (ժզ) Մասնակիցը իր դիմումի (ազատ ոճի) համաձայն կարող է դադարեցնել (սառեցնել) իր կենսաթոշակային հաշվի գործողությունը, եթե հաշվում առկա բոլոր փայերը մարված են:
- (ժէ) Կենսաթոշակային հովանավորի աջակցությունն ունեցող մասնակցի դեպքում կենսաթոշակային հաշվի սառեցման համար անհրաժեշտ է որպեսզի կենսաթոշակային հաշվին առկա բոլոր փայերը մարված լինեն, ինչպես նաև, եթե առկա են հետևյալ պայմաններից որևէ մեկը՝
- (1) մասնակիցը՝ Կենսաթոշակային հովանավորին ներկայացրած գրավոր դիմումի (ազատ ոճի) համաձայն, հրաժարվել է իր հաշվին կուտակային վճարումների կատարումից.
 - (2) դադարել կամ դադարեցվել է նրա աշխատանքային պայմանագիրը Կենսաթոշակային հովանավորի հետ.
 - (3) դադարեցվել է Կենսաթոշակային հովանավորի և Ընկերության միջև կնքված համապատասխան պայմանագիրը.
 - (4) Կենսաթոշակային հովանավորը լուծարվել է:
- (ժը) Ընկերությունը գրավոր դիմումի ներկայուցումից հետո սառեցված կենսաթոշակային հաշվի վրա կատարվող դրամական փոխանցումները սույն կարգով սահմանված ձևով հետ է վերադարձնում գումարը փոխանցողին:
- (ժթ) Սառեցված հաշիվը նորից ակտիվացվում է մասնակցի (ազատ ոճի) դիմումի հիման վրա:

Կանոն 3-5. Կենսաթոշակային փայերի ժառանգման կարգը

- (ա) Կենսաթոշակային փայերի ժառանգության հայտը (Ձև 3-18) ներկայացնում է ժառանգը կամ նրա լիազորված անձը:
- (բ) Կենսաթոշակային փայերի ժառանգն իրավունք ունի միանվագ ստանալ կենսաթոշակային Ֆոնդի ժառանգված փայերի մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները:
- (գ) Հայտի հետ ժառանգը ներկայացնում է ժառանգության իրավունքի վկայագրի, անձնագրի (պետական գրանցումը հավաստող փաստաթղթի), հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթղթի կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի պատճենը:
- (դ) Հայտը չի կարող հետ կանչվել կամ փոփոխվել:
- (ե) Ընկերությունը հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 3-19):
- (զ) Ընկերությունն իրավունք ունի մերժելու հայտը, եթե այն չի համապատասխանում սույն Կանոնների պահանջներին: Հայտը մերժելու և դրա պատճառների մասին Ընկերությունը գրավոր տեղեկացնում է հայտ ներկայացրած ժառանգին: Ընկերության կողմից հայտը մերժելու դեպքում ժառանգը պարտավոր է ներկայացնել նոր հայտ, որը կհամապատասխանի սույն Կանոնների պահանջներին:
- (է) Հայտը ընդունելուց հետո Ընկերությունը Պահառուի հետ համատեղ կազմակերպում է փայերի մարումն ու միջոցների փոխանցումը ժառանգի բանկային հաշվին՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում: Փայերի ժառանգման վերաբերյալ ժառանգին տրամադրվում է հաշվետվություն (Ձև 3-20)՝ սույն կանոններով նախատեսված կարգով:
- (ը) Փայերի ժառանգման վերաբերյալ Պահառուին տրամադրվում է փայերի մարման մասին հաշվետվություն (Ձև 3-17):

Կանոն 3-6. Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը

- (ա) Ընկերությունը տարին մեկ անգամ թղթային եղանակով (եթե անձը չի ընտրել հաշվետվության ստացման էլեկտրոնային տարբերակը) անվճար, ոչ ուշ, քան մինչև ապրիլի 15-ը տրամադրում է նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին տեղեկատվություն՝ տվյալ ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ կենսաթոշակային հաշվում առկա փայեր ունեցող մասնակցին (Ձև 3-21):
- (բ) Ընկերությունը մասնակցի պահանջով նրա կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տարեկան 1 անգամից ավելի թղթային, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվության տրամադրման համար, համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի, գանձում է վճար:
- (գ) Ընկերությունը մասնակցին տեղեկատվությունը տրամադրում է Մասնակցի քարտում նշված եղանակով:
- (դ) Իր ինտերնետային կայքի միջոցով Ընկերությունը յուրաքանչյուր մասնակցի համար կարող է ապահովել անվճար մուտքի հնարավորություն մասնակցի կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկատվությանը:

ԲԱԺԻՆ Դ. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՓԱՅԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳ

Կանոն 4-1. Արժեթղթերի հաշվի բացում

- (ա) Ներդրումային ֆոնդի փայեր ձեռք բերելու համար Մասնակիցները Ռեեստրավարի մոտ բացում են արժեթղթերի հաշիվ կամ կնքում են նաև փայերի պահառության պայմանագիր: Պայմանագրով կարգավորվում են փայերի պահառության հետ կապված հարաբերությունները: Պայմանագրի կնքման նպատակով մասնակիցը տրամադրում է Արժեթղթերի հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը ըստ սույն Կանոնակարգի և Ընկերության կանոնների:
- (բ) Արժեթղթերի հաշվի բացումը ներդրումային ֆոնդի փայերի հաշվառման համակարգ մասնակցի մասին ամփոփ տեղեկությունների մուտքագրումն է:
- (գ) Յուրաքանչյուր մասնակցի համար բացվում է արժեթղթերի մեկ հաշիվ, որին շնորհվում է եզակի հաշվեհամար: Անվանատիրոջ հաշիվ չի բացվում:
- (դ) Արժեթղթերի հաշիվը բացվում է մասնակցի կամ նրա կողմից լիազորված անձի գրավոր դիմումի (Ձևեր 4-1, 4-2) հիման վրա՝ հետևյալ փաստաթղթերի ներկայացմամբ.

(1) Ֆիզիկական անձի համար

- 1) Մասնակցի անձը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 2) ՀՀ ռեզիդենտ մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստվող տեղեկանքի պատճենը, ոչ ռեզիդենտ մասնակցի դեպքում՝ անձին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),
- 3) լիազորված անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը և լիազորված անձի՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը:

(2) Անհատ ձեռնարկատիրոջ համար

- 1) Մասնակցի անձը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 2) Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 3) Հարկ վճարողի հաշվարկային համարը (եթե պետական գրանցումը հավաստող փաստաթուղթը նշված տեղեկատվությունը չի պարունակում),
- 4) Մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենը,
- 5) լիազորված անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը և լիազորված անձի՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը:

(3) Իրավաբանական անձի համար

- 1) Մասնակցի պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 2) Հարկ վճարողի հաշվառման համարը կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ Մասնակցի դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
- 3) Իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- 4) լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը:

- (ե) Եթե Ընկերությանն արդեն իսկ ներկայացվել են արժեթղթերի հաշվի բացման համար սույն Կանոններով նախատեսված փաստաթղթերը կամ դրանց մի մասը, ապա Ընկերության մոտ առկա փաստաթղթերի կրկնակի ներկայացում չի պահանջվում:

- (գ) Մասնակիցը պարտավոր է ողջամիտ ժամկետներում Ընկերությանը ներկայացնել արժեթղթերի հաշվի բացման համար ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխություններն ու լրացումները: Նշված փոփոխությունների մասին չտեղեկացնելու դեպքում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Մասնակցի քարտում սխալ գրառումների, մասնակցի կողմից հաշվետվությունները չստանալու, ինչպես նաև դրանց հետևանքով մասնակցին պատճառված վնասի համար:
- (ե) Ընկերությունը արժեթղթերի հաշիվը բացում է սույն Կանոններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- (ը) Ընկերության կողմից արժեթղթերի հաշիվ բացելու փաստը հավաստվում է Մասնակցի քարտով (Ձևեր 4-3, 4-4), որը տրամադրվում է մասնակցին արժեթղթերի հաշիվը բացելու պահին:

Կանոն 4-2. Առանց առերես շփման արժեթղթերի հաշվի հեռակա կարգով բացում

- (ա) Առանց առերես շփման կամ հեռակա կարգով արժեթղթերի հաշվի բացումը իրականացվում է Կանոն 4-1-ով սահմանված կարգով և ժամկետներում:
- (բ) Հեռակա կարգով արժեթղթերի հաշիվը բացվում է մասնակցի կամ նրա կողմից լիազորված անձի գրավոր դիմումի հիման վրա՝ հետևյալ փաստաթղթերի ներկայացմամբ.

(1) Ֆիզիկական անձի համար

- 1) Մասնակցի անձը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 2) ՀՀ ռեզիդենտ մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենը, ոչ ռեզիդենտ մասնակցի դեպքում՝ անձին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),
- 3) հայտարարություն Մասնակցի ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների մասին,
- 4) լիազորված անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը և լիազորված անձի՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 5) Ընկերության պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:

(2) Իրավաբանական անձի համար

(2.1) ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձի համար

- 1) Մասնակցի պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 2) Հարկ վճարողի հաշվարկային համարը պարունակող փաստաթուղթ (եթե պետական գրանցումը հավաստող փաստաթուղթը տվյալներ չի պարունակում ՀՎՀՀ-ի վերաբերյալ),
- 3) Մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի, բանկային հաշիվները տնօրինելու և (կամ) ստորագրելու իրավասություն ունեցող անձանց ցանկը, նույնականացնող փաստաթղթերը և ստորագրությունների նմուշները՝ հաստատված Մասնակցի համապատասխան իրավասություն ունեցող մարմնի կողմից,
- 4) լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը,
- 5) Ընկերության պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:

(2.2) Օտարերկրյա իրավաբանական անձի համար

- 1) Մասնակցի պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- 2) Հարկ վճարողի հաշվառման համարը կամ այլ համարժեք համարը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
- 3) քաղվածք՝ գրանցման երկրի առևտրային գրանցամատյանից կամ օտարերկրյա իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ՝ որի վաղեմության ժամկետը չպետք է գերազանցի 12 ամիսը,
- 4) Մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի, բանկային հաշիվները տնօրինելու և (կամ)

ստորագրելու իրավասություն ունեցող անձանց ցանկը, նույնականացնող փաստաթղթերը և ստորագրությունների նմուշները՝ հաստատված Մասնակցի համապատասխան իրավասություն ունեցող մարմնի կողմից,

- 5) Հայտարարություն Մասնակցի նշանակալից մասնակիցների (բաժնետերերի) նաև շահառուների ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների մասին,
 - 6) լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը,
 - 7) Ընկերության պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:
- (գ) Եթե Ընկերությանն արդեն իսկ ներկայացվել են արժեթղթերի հաշվի հեռակա կարգով բացման համար սույն Կանոններով նախատեսված փաստաթղթերը կամ դրանց մի մասը, ապա այդ փաստաթղթերի կրկնակի ներկայացում չի պահանջվում:
- (դ) Արժեթղթերի հաշվի հեռակա կարգով բացման համար անհրաժեշտ օտարալեզու փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց պատճենները Ընկերություն են ներկայացվում նոտարական կարգով հայերեն թարգմանված և ապոստիլով (Հաագայի կոնվենցիային միացած երկրներից ուղարկված փաստաթղթերի դեպքում, իսկ եթե պետությունը կոնվենցիայի անդամ չէ, ապա փաստաթղթերի օրինականացումը (լեգալիզացիա) կատարվում է հյուպատոսական ճանապարհով): Ընկերության հայեցողությամբ թարգմանության պահանջը կարող է չգործել անգլերեն և ռուսերեն փաստաթղթերի համար:
- (ե) Մասնակիցը պարտավոր է ողջամիտ ժամկետներում Ընկերությանը ներկայացնել արժեթղթերի հաշվի բացման համար ներկայացված փաստաթղթերում կատարված փոփոխություններն ու լրացումները: Նշված փոփոխությունների մասին չտեղեկացնելու դեպքում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Մասնակցի քարտում սխալ գրառումների, մասնակցի կողմից հաշվետվությունները չստանալու, ինչպես նաև դրանց հետևանքով մասնակցին պատճառված վնասի համար:

Կանոն 4-3. Ներդրումային փայերի թողարկման կարգը

- (ա) Ներդրումային փայերի թողարկումը կատարվում է ներդրումային փայերի Ձեռքբերման հայտի հիման վրա:
- (բ) Ներդրումային փայերի Ձեռքբերման հայտ ներկայացնելու իրավասություն ունի Մասնակիցը կամ նրա լիազորված անձը (Ձևեր 4-5): Ընկերությունը ներդրումային փայերի թողարկումներ կարող է իրականացնել Պահառուից ստացված տեղեկատվության (վճարման հանձնարարականում պարունակվող տեղեկատվության) հիման վրա, որը պետք է պարունակի ներդրումային փայերի Ձեռքբերման հայտի վավերապայմանները:
- (գ) Ներդրումային փայերի Ձեռքբերման հայտը (կամ Պահառուից ստացված տեղեկատվությունը) ստանալիս Ընկերությունը՝
- (1) նույնականացնում է հանձնարարականը ներկայացնող անձին,
 - (2) հայտում մասնակցի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը համեմատում է Ընկերությունում առկա տեղեկատվության հետ,
 - (3) հնարավորության դեպքում հայտում նշված կուտակային վճարի չափը համեմատում է Պահառուից ստացված փաստացի վճարի մասին տեղեկատվության հետ:
- (դ) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 4-6):
- (ե) Ռեեստրավարման պատասխանատու աշխատակիցը տեղեկանում է տարանցիկ հաշվին կատարված վճարների վերաբերյալ:
- (զ) Փայերի թողարկման և արժեթղթերի հաշվում դրանց մուտքագրման վերաբերյալ մասնակցին տրամադրվում է ներդրումային փայերի թողարկման հաշվետվություն (ըստ անհրաժեշտության) (Ձև 4-7)՝ սույն Կանոններով նախատեսված կարգով:
- (է) Փայերի թողարկման վերաբերյալ հաշվետվություն է (Ձև 4-8) տրամադրվում նաև Պահառուին:

(ը) Ֆոնդի կառավարիչները յուրաքանչյուր օրվա վերջում տեղեկանում են փայերի թողարկման վերաբերյալ հայտի ընդունման և տարանցիկ հաշվին փոխանցված միջոցների մասին տեղեկատվությանը:

Կանոն 4-4. Ներդրումային փայերի փոխանակման կարգը

- (ա) Մասնակիցն իրավունք ունի ներդրումային ֆոնդի փայերը փոխանակել այլ ներդրումային ֆոնդի փայերով/դասերով:
- (բ) Մասնակցի փայերի փոխանակումը Ընկերության կողմից կառավարվող այլ ներդրումային ֆոնդի փայերով/դասերով կատարվում է ներդրումային փայերի փոխանակման հայտի (Ձևեր 4-9, 4-10) հիման վրա:
- (գ) Ներդրումային փայերի փոխանակման հայտ կարող է ներկայացնել մասնակիցը կամ նրա լիազորված անձը:
- (դ) Ներդրումային փայերի փոխանակման հայտը ստանալիս Ընկերությունը՝
 - (1) նույնականացնում է հայտը ներկայացնող անձին,
 - (2) հայտում մասնակցի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը համեմատում է Ընկերությունում առկա տեղեկատվության հետ:
- (ե) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 4-11):
- (զ) Փայերի փոխանակման վերաբերյալ մասնակցին (ըստ անհրաժեշտության) տրամադրվում է ներդրումային փայերի փոխանակման հաշվետվություն (Ձև 4-12) սույն Կանոններով նախատեսված կարգով:
- (է) Փայերի փոխանակման վերաբերյալ հաշվետվություն է (Ձև 4-13) տրամադրվում նաև Պահառուին:
- (ը) Յուրաքանչյուր օրվա վերջում ռեեստրի վարման պատասխանատու աշխատակիցը տեղեկատվություն է ուղարկում ֆոնդի կառավարիչներին փոխանակման ներկայացված փայերի քանակի վերաբերյալ, եթե փոխանակման արդյունքում ենթադրվում է գումարի շարժ տարբեր ֆոնդերի միջև:

Կանոն 4-5. Ներդրումային փայերի մարման կարգը

- (ա) Ներդրումային փայերի մարումը կատարվում է՝
 - (1) Մասնակցի կողմից փայի հետգնման պահանջ ներկայացնելու դեպքում.
 - (2) Մասնակցի փայերը այլ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող այլ ներդրումային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում.
 - (3) ներդրումային ֆոնդի դադարեցման (լուծարման) դեպքում:
- (բ) 4-5 (ա) (1), (2) ենթականոններով սահմանված դեպքերում ներդրումային փայերի մարումը կատարվում է մասնակցի կամ նրա լիազորված անձի կողմից ներկայացված փայերի մարման հայտի (Ձևեր 4-14, 4-15) հիման վրա:
- (գ) Ներդրումային փայերի մարման հայտը ստանալիս Ընկերությունը՝
 - (1) նույնականացնում է հայտը ներկայացնող անձին,
 - (2) հայտում մասնակցի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը համեմատում է Ընկերությունում առկա տեղեկատվության հետ:
- (դ) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 4-16):
- (ե) 4-5 (ա) (2) ենթականոնով սահմանված դեպքում Ընկերությունը Պահառուի հետ համատեղ կազմակերպում է մասնակցին պատկանող փայերի մարումն ու միջոցների փոխանցումը այլ ներդրումային ֆոնդի՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

- (գ) 4-5 (ա) (1), (3) ենթականոններով սահմանված դեպքերում Ընկերությունը Պահառուի հետ համատեղ կազմակերպում է մասնակցին պատկանող փայերի մարման ու միջոցների փոխանցումը մասնակցի բանկային հաշվին՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
- (ե) Փայերի մարման դեպքում Ընկերությունը մասնակցից կարող է գանձել տուգանք՝ իր ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով:
- (ը) Փայերի մարման վերաբերյալ մասնակցին (ըստ անհրաժեշտության) տրամադրվում է ներդրումային փայերի մարման հաշվետվություն (Ձև 4-17)՝ սույն Կանոններով նախատեսված կարգով:
- (թ) Փայերի մարման վերաբերյալ հաշվետվություն է (Ձև 4-18) տրամադրվում նաև Պահառուին:
- (ժ) Ֆոնդի կառավարիչները յուրաքանչյուր օրվա վերջում տեղեկանում են մարման ներկայացված փայերի քանակի վերաբերյալ:
- (ժա) Մասնակիցը իր դիմումի (ազատ ոճի) համաձայն կարող է դադարեցնել (սառեցնել) իր արժեթղթերի հաշվի գործողությունը, եթե հաշվում առկա բոլոր փայերը մարված են:
- (ժբ) Ընկերությունը գրավոր դիմումի ստացումից հետո սառեցված արժեթղթերի հաշվի վրա փոխանցված գումարը սույն կարգով սահմանված ձևով հետ է վերադարձնում փոխանցողի բանկային հաշվին:

Կանոն 4-6. Ներդրումային փայերի փոխանցման կարգը

- (ա) Ներդրումային փայերի փոխանցումը կարող է կատարվել հետևյալ հիմքերով
 - (1) ժառանգություն կամ իրավահաջորդություն.
 - (2) նվիրատվություն.
 - (3) արգելադրում (գրավադրում).
 - (4) առուվաճառք, այդ թվում՝ ՌԵՊՈ և հակադարձ ՌԵՊՈ գործառնություններ:
- (բ) Ներդրումային փայերի ժառանգության իրավունքը ձևակերպվում է ժառանգի կամ նրա լիազորված անձի հայտի հիման վրա (Ձև 4-19):
- (գ) Ներդրումային փայերի ժառանգն իրավունք ունի միանվագ ստանալ ներդրումային Ֆոնդի ժառանգված փայերի մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները:
- (դ) Հայտի հետ ժառանգը ներկայացնում է ժառանգության իրավունքի վկայագրի և 4-1 (դ) ենթականոնով նախատեսված փաստաթղթերի պատճենը:
- (ե) Հայտը չի կարող հետ կանչվել կամ փոփոխվել:
- (զ) Ընկերությունը հավաստում է ժառանգի հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 4-20):
- (է) Ընկերությունն իրավունք ունի մերժելու հայտը, եթե հայտը և կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Կանոնների պահանջներին: Հայտը մերժելու և դրա պատճառների մասին Ընկերությունը գրավոր տեղեկացնում է հայտ ներկայացրած ժառանգին: Ընկերության կողմից հայտը մերժելու դեպքում ժառանգը պարտավոր է ներկայացնել նոր հայտ, որը պետք է համապատասխանի սույն Կանոնների պահանջներին:
- (ը) Փայերի ժառանգման վերաբերյալ ժառանգին տրամադրվում է հաշվետվություն (Ձև 4-21)՝ սույն կանոններով նախատեսված կարգով:
- (ըա) Ժառանգի 4-6 (բ) ենթականոնի համաձայն ներկայացված դիմումն ընդունելուց հետո Ընկերությունը 4-1 կանոնի համաձայն ժառանգի համար բացում է արժեթղթերի հաշիվ և կազմակերպում է ժառանգատուի փայերի փոխանցումը ժառանգի արժեթղթերի հաշվին՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում, ինչպես նաև ժառանգին ներկայացնում է Մասնակցի քարտ (Ձևեր 4-3, 4-4):
- (ըբ) Ժառանգի 4-6 (բ) ենթականոնի համաձայն ներկայացված դիմումը կատարելուց հետո Ընկերությունը Պահառուին տրամադրում է փայերի մարման վերաբերյալ հաշվետվություն (Ձև 4-18):
- (ըգ) Իրավահաջորդության հիմքով ներդրումային փայերի փոխանցումը կատարվում է ժառանգության համար նախատեսված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով իրավահաջորդությանը վերաբերող առանձնահատկությունները:

- (ըդ) Նվիրատվության հիմքով ներդրումային փայերի փոխանցման դեպքում մասնակիցը Ընկերություն է ներկայացնում ներդրումային փայերի փոխանցման հայտ (Ձև 4-19):
- (ըե) Հայտի հետ նվիրատուն ներկայացնում է նվիրատվության պայմանագրի, 4-1 (դ) ենթականոնով նախատեսված փաստաթղթերի պատճենը:
- (ըզ) Ընկերությունը հավաստում է (ըստ անհրաժեշտության) նվիրատուի հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 4-20):
- (ըէ) Ընկերությունն իրավունք ունի մերժելու դիմումը, եթե դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Կանոնների պահանջներին: Դիմումը մերժելու և դրա պատճառների մասին Ընկերությունը գրավոր տեղեկացնում է դիմում ներկայացրած նվիրատուին: Ընկերության կողմից դիմումը մերժելու դեպքում նվիրատուն կարող է ներկայացնել նոր դիմում, որը պետք է համապատասխանի սույն Կանոնների պահանջներին:
- (ըը) Նվիրատուի դիմումն ընդունելուց հետո Ընկերությունը 4-1 կանոնի համաձայն նվիրատուի համար բացում է արժեթղթերի հաշիվ և կազմակերպում է նվիրատուի փայերի փոխանցումը նվիրատուի արժեթղթերի հաշվին՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում, ինչպես նաև նվիրատուին ներկայացնում է՝ (ըստ անհրաժեշտության) համապատասխան հաշվետվություն (Ձև 4-21), իսկ նվիրատուին՝ Մասնակցի քարտ (Ձևեր 4-3, 4-4):

Կանոն 4-7. Ներդրումային փայերի արգելադրումը (գրավադրումը) և արգելադրման (գրավադրման) դադարեցումը

- (ա) Ներդրումային փայերի արգելադրումը (գրավադրումը) իրականացվում է ներդրումային փայով ապահովված պահանջի/պարտավորության ծագման դեպքում:
- (բ) Ներդրումային փայերի արգելադրումը (գրավադրումը) իրականացվում է՝
 - (1) մասնակցի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից տրված արգելադրման (գրավադրման) հայտի հիման վրա.
 - (2) դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի որոշման հիման վրա:
- (գ) Ներդրումային փայերի արգելադրման (գրավադրման) համար արգելադրման (գրավադրման) հայտին կից Ընկերություն են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.
 - (1) արգելադրման (գրավադրման) հայտը ներկայացնող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը,
 - (2) եթե արգելադրման (գրավադրման) հայտը ստորագրված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթուղթը,
 - (3) դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի որոշումը ներդրումային փայերի արգելադրման վերաբերյալ,
 - (4) փայերի գրավադրման պայմանագիրը:
- (դ) Արգելադրման (գրավադրման) հայտն առնվազն ներառում է հետևյալ տեղեկությունները.
 - (1) հայտը ներկայացրած անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան, տրման ամսաթիվը (օր/ամիս/տարի), փաստաթուղթը տված մարմնի անվանումը, հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (ֆիզիկական անձանց համար), անվանումը, պետական գրանցման համարը, գրանցման ամսաթիվը (օր/ամիս/տարի), գրանցող մարմնի անվանումը, ՀՎՀՀ-ն (իրավաբանական անձանց համար),
 - (2) արգելադրվող (գրավադրվող) փայերի տեսակը/դասը, քանակը,
 - (3) արգելադրման (գրավադրման) համար ներկայացվող փաստաթղթի վավերապայմանները,
 - (4) եթե արգելադրման հայտը ստորագրված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա նրա վերաբերյալ տեղեկությունները (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան, տրման ամսաթիվը (օր/ամիս/տարի), փաստաթուղթը տված մարմնի անվանումը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների

համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը), նրա լիազորությունը հավաստող փաստաթղթի վավերապայմանները,

- (5) արգելադրման (գրավադրման) ժամկետը կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում արգելադրումը (գրավադրումը) դադարեցվում է,
 - (6) հայտի ներկայացման տարին, ամիսը և ամսաթիվը,
 - (7) հայտը ներկայացնող անձի ստորագրությունը:
- (ե) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 4-22):
- (զ) Արժեթղթերի հաշվում արգելադրման (գրավադրման) մասին գրառումները կատարվում են ոչ ուշ, քան փայերի արգելադրման (գրավադրման) համար սահմանված փաստաթղթերի ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- (է) Արժեթղթերի հաշվում արգելադրման (գրավադրման) մասին գրառումները կատարելուց հետո Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հաշվետվություն (Ձև 4-23) է ներկայացնում արգելադրման հայտը ներկայացնող անձին՝ սույն Կանոններով նախատեսված կարգով:
- (ը) Արգելադրման (գրավադրման) դադարեցման համար հիմք հանդիսացող փաստի կամ իրադարձության տեղի ունենալու դեպքում փայերի արգելադրումը (գրավադրումը) դադարեցվում է՝
- (1) մասնակցի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից ներկայացված արգելադրման (գրավադրման) դադարեցման հայտի հիման վրա,
 - (2) դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի որոշման հիման վրա,
 - (3) գրավառուի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից ներկայացված արգելադրման (գրավադրման) դադարեցման հայտի հիման վրա:
- (թ) 4-7 (ը) (1) ենթականոնով նախատեսված հիմքով արգելադրման (գրավադրման) դադարեցման դեպքում ներկայացվում է նաև ներդրումային փայերի արգելադրումը (գրավադրումը) դադարեցնելու մասին գրավառուի, ինչպես նաև այն անձի գրավոր համաձայնությունը, ում օգտին կատարվել է արգելադրումը (գրավադրումը):
- (ժ) Արգելադրման (գրավադրման) դադարեցման հայտը ներառում է առնվազն հետևյալ տեղեկությունները.
- (1) հայտը ներկայացրած անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան, տրման ամսաթիվը (օր/ամիս/տարի), փաստաթուղթը տված մարմնի անվանումը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (ֆիզիկական անձանց համար), անվանումը, պետական գրանցման համարը, գրանցման ամսաթիվը (օր/ամիս/տարի), գրանցող մարմնի անվանումը, ՀՎՀՀ-ն (իրավաբանական անձանց համար),
 - (2) արգելադրված (գրավադրված) փայերի տեսակը/դասը, քանակը,
 - (3) արգելադրման (գրավադրման) դադարեցման համար ներկայացվող փաստաթղթի վավերապայմանները,
 - (4) եթե արգելադրման (գրավադրման) հայտը ստորագրված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա նրա վերաբերյալ տեղեկությունները (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան, տրման ամսաթիվը (օր/ամիս/տարի), փաստաթուղթը տված մարմնի անվանումը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը), նրա լիազորությունը հավաստող փաստաթղթի վավերապայմանները,
 - (5) հայտի ներկայացման տարին, ամիսը և ամսաթիվը,
 - (6) հայտը ներկայացնող անձի ստորագրությունը:
- (ժա) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է հայտի ընդունումը տեղեկանքով (Ձև 4-24):
- (ժբ) Արժեթղթերի հաշվում արգելադրման (գրավադրման) դադարեցման մասին գրառումները կատարելուց հետո Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հաշվետվություն (Ձև 4-25) է

ներկայացնում արգելադրման (գրավադրման) հայտը ներկայացնող անձին սույն Կանոններով նախատեսված կարգով:

Կանոն 4-8. Ներդրումային փայերի փոխանցման կարգը առուվաճառքի դեպքերում

- (ա) Ներդրումային փայերի առուվաճառքը (այդ թվում՝ ՌԵՊՈՒ և հակադարձ ՌԵՊՈՒ գործառնություններով) իրականացվում է մասնակցի՝ առուվաճառքի հիմքով ներդրումային ֆոնդի փայերի փոխանցման գրավոր հայտի (Ձև 4-19) հիման վրա,
- (բ) Դիմումի հետ մասնակիցը ներկայացնում է առուվաճառքի պայմանագրի, իսկ փայը ստացող անձը՝ 4-1 (դ) ենթականոնով նախատեսված փաստաթղթերի պատճենը:
- (գ) Ընկերությունը (ըստ անհրաժեշտության) հավաստում է դիմումի ընդունումը տեղեկանքով (Ձև 4-20):
- (դ) Ընկերությունն իրավունք ունի մերժելու դիմումը, եթե դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Կանոնների պահանջներին: Դիմումը մերժելու և դրա պատճառների մասին Ընկերությունը գրավոր տեղեկացնում է դիմում ներկայացրած մասնակցին: Ընկերության կողմից դիմումը մերժելու դեպքում մասնակիցը կարող է ներկայացնել նոր դիմում, որը պետք է համապատասխանի սույն Կանոնների պահանջներին:
- (ե) Մասնակցի դիմումը ընդունելուց հետո Ընկերությունը 4-1 կանոնի համաձայն փայը ստացող անձի համար բացում է արժեթղթերի հաշիվ և կազմակերպում է մասնակցի փայերի փոխանցումը փայը ստացող անձի արժեթղթերի հաշվին՝ Ֆոնդի կանոններով սահմանված կարգով և ժամկետում, ինչպես նաև փայը փոխանցած մասնակցին (ըստ անհրաժեշտության) ներկայացնում է համապատասխան հաշվետվություն (Ձև 4-21), իսկ փայը ստացող անձին՝ Մասնակցի քարտ (Ձևեր 4-3, 4-4):
- (զ) ՌԵՊՈՒ և հակադարձ ՌԵՊՈՒ գործարքներից բխող փայերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունների գրանցումները կատարվում են 4-8 կանոնով սահմանված կարգով:

Կանոն 4-9. Արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը

- (ա) Ընկերությունը տարին մեկ անգամ թղթային (եթե անձը չի ընտրել հաշվետվության ստացման էլեկտրոնային տարբերակը) եղանակով անվճար, ոչ ուշ, քան մինչև ապրիլի 15-ը տեղեկատվություն է տրամադրում մասնակցին նրա արժեթղթերի հաշվում արտացոլված նախորդ օրացուցային տարվա տվյալների մասին (Ձև 4-26):
- (բ) Ընկերությունը մասնակցի պահանջով նրա արժեթղթերի հաշվի վերաբերյալ տարեկան 1 անգամից ավելի թղթային, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվության տրամադրման համար, համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի, գանձում է վճար:
- (գ) Ընկերությունը մասնակցին տեղեկատվությունը տրամադրում է Մասնակցի քարտում նշված եղանակով:
- (դ) Իր ինտերնետային կայքի միջոցով Ընկերությունը յուրաքանչյուր մասնակցի համար կարող է ապահովել անվճար մուտքի հնարավորություն մասնակցի արժեթղթերի հաշվի վերաբերյալ տեղեկատվությանը:



Ա. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ										
1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար			2. անուն			3. ազգանուն				
4. ծննդյան ամսաթիվ			5. սեռ			6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ			7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար	
8. քաղաքացիություն			9. կենսական շահերի կենտրոն			10. անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման (հաշվառման) համար			11. ՀՎՀՀ	
Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ										
12. ստացման եղանակ					13. լեզու					
12.1. փոստով		12.2. էլեկտրոնային փոստով		12.3. առձեռն առաքմամբ		13.1. հայերեն		13.2. ռուսերեն		13.3. անգլերեն
Գ. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ										
14. փոստային ինդեքս		15. երկիր	16. վարչատարածքային միավոր		17. համայնք (վարչական շրջան)			18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան		
19. բանկ. հաշվի համար		20. հեռախոսի համար			21. բջջային հեռախոսի համար			22. էլեկտրոնային փոստի հասցե		
Դ. ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՏԵՍԱԿ										
Ֆոնդի տեսակ			Ֆոնդի անվանում				Մասնաբաժին, %			
Կայուն եկամտային			ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ							
Պահպանողական			ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդ							
Ընդամենը										

Դուք կարող եք փոխել Ձեր կողմից ընտրված ֆոնդը կամ համամասնությունը, որի հիման վրա Ձեր վճարումները կբաշխվեն տարբեր ֆոնդերի միջև:

Հաշվի բացման և ընտրության դիմումը ևս մեկ անգամ լրացնելով Դուք կարող եք նաև՝

1. Փոխել ֆոնդը, այսինքն՝ նոր վճարումները ուղղել այլ կենսաթոշակային ֆոնդ կամ ֆոնդեր, կամ փոխել այն համամասնությունը, որով կբաշխվի Ձեր կողմից կատարվող կուտակային կենսաթոշակային վճարները.
2. Փոխել Ձեր անհատական և կոնտակտային տվյալները, ինչպես նաև տեղեկատվության ստացման Ձեր նախընտրած միջոցը:

Սույն դիմումը/հայտը լրացնելով և ստորագրելով ես՝ ներքոստորագրյալս.

հավաստիացնում եմ, որ գիտակցում եմ սույն դիմումը/հայտը ստորագրելու իրավական բոլոր հետևանքները,

գիտակցում եմ, որ սույն դիմումը/հայտը ստորագրելով միանում եմ _____ ֆոնդի կանոններին այն խմբագրությամբ, որն ուժի մեջ է իմ կողմից դիմումը/հայտը ստորագրելու պահին,

հավաստիացնում եմ, որ ծանոթացել եմ _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ բոլոր այն ներքին իրավական ակտերին, որոնք կարող են որևէ կերպ կիրառելի լինել սույն դիմումի/հայտի հիման վրա ծագող/փոփոխվող/դադարող իրավահարաբերությունների նկատմամբ՝ դրանց բոլոր համապատասխան փոփոխություններով և լրացումներով,

հավաստիացնում եմ, որ սույն դիմումի մեջ/հայտում կամ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է և ամբողջական և դրա փոփոխության դեպքում, այդ մասին կտեղեկացնեմ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին,

հրաժարվում եմ վիճարկելու՝ _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին իրավական ակտերին ծանոթ լինելու փաստը և պարտավորվում եմ բոլոր և ցանկացած դեպքերում պնդել իմ՝ այդպիսի իրավական ակտերին ծանոթ լինելու հանգամանքը,

_____ ֆոնդը կամ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը պատասխանատվություն չեն կրում ցանկացած այնպիսի կորուստների համար, որոնք պայմանավորված կլինեն իմ կողմից _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին իրավական ակտերին ծանոթ չլինելու հետ:

Ե. ՄԱՍՆԱԿՑԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձ. ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ
(օր/ամիս/տարեթիվ)



Ա. ՄԱՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ			
1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար		2. անուն	3. ազգանուն
4. ծննդյան ամսաթիվ	5. սեռ	6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ	7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար
8. քաղաքացիություն	9. կենսական շահերի կենտրոն	10. անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման (հաշվառման) համար	11. ՀՎՀՀ
Բ. ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՅՈՇԱԿԱՅԻՆ ՆԱԽԿԻՆ ՍԽԵՄԱ			
Ֆոնդի տեսակ	Ֆոնդի անվանում		Մասնաբաժին, %
Կայուն եկամտային	ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ		
Պահպանողական	ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդ		
Ընդամենը			
Գ. ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՅՈՇԱԿԱՅԻՆ ՆՈՐ ՍԽԵՄԱ			
Ֆոնդի տեսակ	Ֆոնդի անվանում		Մասնաբաժին, %
Կայուն եկամտային	ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ		
Պահպանողական	ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդ		
Ընդամենը			

Դուք կարող եք փոխել Ձեր կողմից ընտրված ֆոնդը կամ համամասնությունը, որի հիման վրա Ձեր վճարումները կբաշխվեն տարբեր ֆոնդերի միջև:

Հաշվի բացման և ընտրության դիմումը ևս մեկ անգամ լրացնելով Դուք կարող եք նաև՝

1. Փոխել ֆոնդը, այսինքն՝ նոր վճարումները ուղղել այլ կենսաթոշակային ֆոնդ կամ ֆոնդեր, կամ փոխել այն համամասնությունը, որով կբաշխվի Ձեր կողմից կատարվող կուտակային կենսաթոշակային վճարները.
2. Փոխել Ձեր անհատական և կոնտակտային տվյալները, ինչպես նաև տեղեկատվության ստացման Ձեր նախընտրած միջոցը:

Սույն դիմումը/հայտը լրացնելով և ստորագրելով ես՝ ներքոստորագրյալս.

հավաստիացնում եմ, որ գիտակցում եմ սույն դիմումը/հայտը ստորագրելու իրավական բոլոր հետևանքները,

գիտակցում եմ, որ սույն դիմումը/հայտը ստորագրելով միանում եմ _____ ֆոնդի կանոններին այն խմբագրությամբ, որն ուժի մեջ է իմ կողմից դիմումը/հայտը ստորագրելու պահին,

հավաստիացնում եմ, որ ծանոթացել եմ _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ բոլոր այն ներքին իրավական ակտերին, որոնք կարող են որևէ կերպ կիրառելի լինել սույն դիմումի/հայտի հիման վրա ծագող/փոփոխվող/դադարող իրավահարաբերությունների նկատմամբ՝ դրանց բոլոր համապատասխան փոփոխություններով և լրացումներով,

հավաստիացնում եմ, որ սույն դիմումի մեջ/հայտում կամ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է և ամբողջական և դրա փոփոխության դեպքում, այդ մասին կտեղեկացնեմ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին,

հրաժարվում եմ վիճարկելու՝ _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին իրավական ակտերին ծանոթ լինելու փաստը և պարտավորվում եմ բոլոր և ցանկացած դեպքերում պնդել իմ՝ այդպիսի իրավական ակտերին ծանոթ լինելու հանգամանքը,

ԿԱՄ 1, ԿԱՄ 2 ֆոնդը կամ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը պատասխանատվություն չեն կրում ցանկացած այնպիսի կորուստների համար, որոնք պայմանավորված կլինեն իմ կողմից _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին իրավական կառուցվածքի ծանոթ չլինելու հետ:

Դ. ՄԱՆԼԱԿՑԻ ՍՈՐՈՒԳՐՈՒԹՅՈՒՆ


Ե. ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ
(օր/ամիս/տարեթիվ)



Սույնով հավաստում ենք, որ համաձայն կենսաթոշակային հաշվի բացման և կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ընտրության վերաբերյալ Ձեր դիմումի՝ Ձեր համար բացվել է կենսաթոշակային հաշիվ և կատարվել կենսաթոշակային ֆոնդի ընտրություն									
Ա. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ									
1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար			2. անուն			3. ազգանուն		4. կենսաթոշակային հաշվի համար	
5. ծննդյան ամսաթիվ		6. սեռ		7. անձը հաստատող փաստաթղթի տեսակ			8. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար		
9. քաղաքացիություն		10. կենսական շահերի կենտրոն		11. անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման (հաշվառման) համար				12. ՀՎՀՀ	
Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ									
13. ստացման եղանակ				14. լեզու					
13.1. փոստով	13.2. էլեկտրոնային փոստով	13.3. առձեռն առաքմամբ	14.1. հայերեն			14.2. ռուսերեն		14.3. անգլերեն	
Գ. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ									
15. փոստային ինդեքս	16. երկիր	17. վարչատարածքային միավոր		18. համայնք (վարչական շրջան)		19. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան			
20. բանկ, հաշվի համար		21. հեռախոսի համար		22. բջջային հեռախոսի համար		23. էլեկտրոնային փոստի հասցե			
Դ. ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՏԵՍԱԿ									
Ֆոնդի տեսակ		Ֆոնդի անվանում				Մասնաբաժին, %			
Կայուն եկամտի		ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ							
Պահպանողական		ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդ							
Ընդամենը									

Ռեեստրավար՝ _____
(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Ընկերության տնօրեն՝ _____
(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)



Ա. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ										
1. Անվանում			2. Կազմակերպարավական ձև				3. Պետական գրանցման համար			
4. Պետական գրանցման ամսաթիվ			5. ՀՎՀՀ				6. Ռեզիդենտություն			
7. Տնօրեն										
7.1. Անուն		7.2. Ազգանուն		7.3. Հանրային ծառայության համարանիշ		7.4. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար				
8. Լիազորված անձ										
8.1. Անուն		8.2. Ազգանուն		8.3. Հանրային ծառայության համարանիշ		8.4. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար		8.5. Լիազորագրի օր/ամիս/տարեթիվ		
Բ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ										
9. ստացման եղանակ					10. լեզու					
9.1. փոստով		9.2. փոստով էլեկտրոնային		9.3. առձեռն առաքմամբ		10.1. հայերեն		10.2. ռուսերեն		10.3. անգլերեն
Գ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ										
11. փոստային ինդեքս		12. երկիր		13. վարչատարածքային միավոր		14. համայնք (վարչական շրջան)		15. գտնվելու վայր, փողոց, տուն (շենք), բնակարան		
16. բանկ, հաշվի համար		17. հեռախոսի համար				18. քջջային հեռախոսի համար		19. էլեկտրոնային փոստի հասցե		
Սույնով հավաստիացնում եմ, որ ծանոթ եմ կենսաթոշակային ֆոնդի կանոններին, կենսաթոշակային ֆոնդի փայերի ռեեստրավարման կանոններին և սակագների կանոնակարգին:										
Դ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ					Ե. ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ (օր/ամիս/տարեթիվ)					



Սույնով հավաստում ենք, որ համաձայն Ձեր դիմումի՝ Դուք գրանցվել եք որպես Կենսաթոշակային հովանավոր										
Ա. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ										
1. Անվանում			2. Կազմակերպարավական ձև			3. Պետական գրանցման համար				
4. Պետական գրանցման ամսաթիվ			5. ՀՎՀՀ			6. Ռեզիդենտություն				
7. Տնօրեն										
7.1. Անուն		7.2. Ազգանուն		7.3. Հանրային ծառայության համարանիշ		7.4. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար				
8. Լիազորված անձ										
8.1. Անուն		8.2. Ազգանուն		8.3. Հանրային ծառայության համարանիշ		8.4. Անձը հաստատող փաստաթղթի սերիա, համար		8.5. Լիազորագրի օր/ամիս/տարեթիվ		
Բ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ										
9. ստացման եղանակ					10. լեզու					
9.1. փոստով		9.2. էլեկտրոնային փոստով		9.3. առձեռն առաքում		10.1. հայերեն		10.2. ռուսերեն		10.3. անգլերեն
Գ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ										
11. փոստային ինդեքս		12. երկիր		13. վարչատարածքային միավոր		14. համայնք (վարչական շրջան)		15. գտնվելու վայր, փողոց, տուն (շենք), բնակարան		
16. բանկ, հաշվի համար			17. հեռախոսի համար			18. բջջային հեռախոսի համար		19. էլեկտրոնային փոստի հասցե		

Ռեեստրավար՝

_____ (ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Ընկերության տնօրեն՝

_____ (ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)



կապիտալ ասեթ մեներջմանը

**Ձև 3-5. Կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռքբերման հայտ
(ֆիզիկական անձի դեպքում)
Հաստատված է**

1.	Մասնակցի անուն, ազգանուն	
2.	Կենսաթոշակային հաշվի համար	
3.	Կենսաթոշակային ֆոնդի բանկային տարանցիկ հաշվի համար	
4.	Վճարման ամսաթիվ	
5.	Փոխանցվող գումար, ՀՀ դրամ	

Մասնակից _____
(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)



Սույն հայտը ներկայացվում է, որպես կենսաթոշակային ֆոնդի փայերի պարբերական թողարկման հայտ, ստորև նշված պայմաններով

1.	Մասնակցի անուն, ազգանուն					
2.	Կենսաթոշակային հաշվի համար					
3.	Կենսաթոշակային ֆոնդի բանկային տարանցիկ հաշվի համար					
4.	Վճարման պարբերականություն	5.1. ամսական		5.2. եռամսյակային		5.3. տարեկան
5.	Առաջին վճարման ամսաթիվ					
6.	Պարբերական վճարման գումար, ՀՀ դրամ					
7.	Պարտավորվում եմ պարբերական վճարման գումարի չափի կամ պարբերականության փոփոխության դեպքում գումարի փոխանցման օրը ներկայացնել սույն փաստաթղթի փոփոխված տարբերակը					

Մասնակից _____
(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)



Կապիտալ ասեթ մեներջմենք

**Ձև 3-6. Կենսաթոշակային փայերի ձեռքբերման հայտ
(Կենսաթոշակային հովանավորի դեպքում)
Հաստատված է**

Կենսաթոշակային հովանավորի անվանում _____

ՀՎՀՀ _____

Հաշվետու ամիս _____

Տարեթիվ _____

Ցուցակի հղման համար _____

h/h	Մասնակցի անուն, ազգանուն	Հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար	Կամավոր կուտակային վճար				Ընդամենը կուտակային վճար, ՀՀԴ
			Գործատու		Աշխատակից		
			%	ՀՀԴ	%	ՀՀԴ	
Ընդամենը							

Կենսաթոշակային հովանավորի իրավասու անձի ստորագրություն, կ.տ.



Ձև 3-7. Կենսաթոշակային ֆոնդի փայի ձեռքբերման հայտի ընդունման վերաբերյալ տեղեկանք Հաստատված է

1.	Մասնակցի անուն, ազգանուն, կենսաթոշակային հաշվի համար			
2.	Հանձնարարականի ժամ/օր/ամիս/տարեթիվ	ընդունման		
3.	Ստացված գումար ընդամենը, ՀՀ դրամ			
4.	Կենսաթոշակային ֆոնդի տեսակ			
5.	Ստացված գումար ըստ ֆոնդի տեսակի, ՀՀ դրամ			
6.	Թողարկման վճար,%			
7.	Թողարկման գին, ՀՀ դրամ			

Ռեեստրավար՝ _____
(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Ընկերության տնօրեն՝ _____
(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)



1.	Մասնակցի անուն, ազգանուն, կենսաթոշակային հաշվի համար			
2.	Հանձնարարականի ընդունման ժամ/օր/ամիս/տարեթիվ			
3.	Հանձնարարականի կատարման ժամ/օր/ամիս/տարեթիվ			
4.	Ընդամենը ստացված գումար, ՀՀ դրամ			
5.	Կենսաթոշակային ֆոնդի տեսակ			Ընդամենը, ՀՀ դրամ
6.	Մասնակցից ստացված գումար ըստ ֆոնդերի, ՀՀ դրամ			
7.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի քանակ			
8.	Թողարկման վճար, %			
9.	Թողարկման գին, ՀՀ դրամ			
10.	Կենսաթոշակային ֆոնդի փայի հաշվարկային արժեք, ՀՀ դրամ			
11.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի հաշվարկային ընդհանուր արժեք, ՀՀ դրամ			

Ռեեստրավար՝ _____
(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Ընկերության տնօրեն՝ _____
(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)
Կ.Տ.



Ամսաթիվ __/__/____

1.	Ստացված ընդամենը գումար, ՀՀ դրամ				Ընդամենը, ՀՀ դրամ
2.	Կենսաթոշակային ֆոնդի տեսակ				
3.	Ըստ կենսաթոշակային ֆոնդի տեսակի ստացված գումար, ՀՀ դրամ				
4.	Կենսաթոշակային ֆոնդի փայի հաշվարկային արժեք, ՀՀ դրամ				
5.	Թողարկման վճար, %				
6.	Կենսաթոշակային ֆոնդի թողարկված փայերի քանակ				
7.	Թողարկման գին, ՀՀ դրամ				
8.	Կենսաթոշակային ֆոնդի թողարկված փայերի ընդհանուր հաշվարկային արժեք, ՀՀ դրամ				
9.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի մնացորդը գործառնական օրվա բացման դրությամբ, հատ				
10.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի մնացորդը գործառնական օրվա փակման դրությամբ, հատ				

Ընկերության տնօրեն՝ _____
(ստորագրություն)



Ա. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ				
1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար		2. անուն		3. ազգանուն
4. կենսաթոշակային հաշվի համար				
Բ. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ				
5. փոստային ինդեքս	6. երկիր	7. վարչատարածքային միավոր	8. համայնք (վարչական շրջան)	9. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան
10. բանկ, հաշվի համար		11. հեռախոսի համար	12. բջջային հեռախոսի համար	13. էլեկտրոնային փոստի հասցե
Գ. ՓՈՒՍԱՆԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՏԵՍԱԿ(ՆԵՐ) ԵՎ ՔԱՆԱԿ				
Ֆոնդի տեսակ		Ֆոնդի անվանում		Քանակ
Կայուն եկամտի		ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ		
Պահպանողական		ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդ		
Դ. ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՆՈՐ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՏԵՍԱԿ(ՆԵՐ) ԵՎ ՄԱՆԱԲԱԺԻՆ(ՆԵՐ)				
Ֆոնդի տեսակ		Ֆոնդի անվանում		Մասնաբաժին (%)
Կայուն եկամտի		ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ		
Պահպանողական		ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդ		

Սույն դիմումը/հայտը լրացնելով և ստորագրելով ես՝ ներքոստորագրյալս.
հավաստիացնում եմ, որ գիտակցում եմ սույն դիմումը/հայտը ստորագրելու իրավական բոլոր հետևանքները,
գիտակցում եմ, որ սույն դիմումը/հայտը ստորագրելով միանում եմ _____ ֆոնդի կանոններին այն խմբագրությամբ, որն ուժի մեջ է իմ կողմից
դիմումը/հայտը ստորագրելու պահին,
հավաստիացնում եմ, որ ծանոթացել եմ _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ բոլոր այն ներքին իրավական ակտերին,
որոնք կարող են որևէ կերպ կիրառելի լինել սույն դիմումի/հայտի հիման վրա ծագող/փոփոխվող/դադարող իրավահարաբերությունների նկատմամբ՝ դրանց բոլոր համապատասխան
փոփոխություններով և լրացումներով,
հավաստիացնում եմ, որ սույն դիմումի մեջ/հայտում կամ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է և ամբողջական և դրա
փոփոխության դեպքում, այդ մասին կտեղեկացնեմ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին,
հրաժարվում եմ վիճարկելու՝ _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին իրավական ակտերին ծանոթ լինելու
փաստը և պարտավորվում եմ բոլոր և ցանկացած դեպքերում պնդել իմ՝ այդպիսի իրավական ակտերին ծանոթ լինելու հանգամանքը,
_____ ֆոնդը կամ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը պատասխանատվություն չեն կրում ցանկացած
այնպիսի կորուստների համար, որոնք պայմանավորված կլինեն իմ կողմից _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին
իրավական ակտերին ծանոթ չլինելու հետ:

Ե. ՄԱՆԱԿՑԻ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ
(Ժամ/օր/ամիս/տարեթիվ)



կապիտալ ասեթ մեներջման

Ձև 3-11. Կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման հայտի ընդունման վերաբերյալ տեղեկանք Հաստատված է

1.	Մասնակցի անուն, ազգանուն, կենսաթոշակային հաշվի համար			
2.	Հայտի ընդունման ժամ/օր/ամիս/տարեթիվ			
3.	Փոխանակման ենթակա կենսաթոշակային ֆոնդի փայի տեսակ			
4.	Փոխանակման ենթակա կենսաթոշակային ֆոնդի փայերի քանակ			
5.	Կենսաթոշակային նոր ֆոնդի փայերի տեսակ			
6.	Կենսաթոշակային նոր ֆոնդի փայերի մասնաբաժին, %			
7.	Փոխանակման վճար, %			

Ռեեստրավար՝

_____ (ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Ընկերության տնօրեն՝

_____ (ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Կ.Տ.



կապիտալ ասեք մեմեջմեմք

Ձև 3-12. Կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման մասին հաշվետվություն Հաստատված է

1.	Մասնակցի անուն, ազգանուն, կենսաթոշակային հաշվի համար				
2.	Հայտի ընդունման ժամ/օր/ամիս/տարեթիվ				
3.	Հայտի կատարման ժամ/օր/ամիս/տարեթիվ				
4.	Կենսաթոշակային ֆոնդի փոխանակված փայի տեսակ				Ընդամենը, ՀՀ դրամ
5.	Կենսաթոշակային ֆոնդի փոխանակված փայի քանակ				
6.	Կենսաթոշակային ֆոնդի փայի հաշվարկային (մարման) արժեք, ՀՀ դրամ				
7.	Կենսաթոշակային նոր ֆոնդի փայերի քանակ				
8.	Կենսաթոշակային նոր ֆոնդի փայերի տեսակ				
9.	Կենսաթոշակային ֆոնդի փայի հաշվարկային (թողարկման) արժեք, ՀՀ դրամ				
10.	Կենսաթոշակային նոր ֆոնդի փայերի մասնաբաժին, %				
11.	Փոխանակման վճար, %				
12.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի ընդհանուր հաշվարկային (մարման) արժեք, ՀՀ դրամ				
13.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի ընդհանուր հաշվարկային (թողարկման) արժեք, ՀՀ դրամ				

Ռեեստրավար՝

_____ (ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Ընկերության տնօրեն՝

_____ (ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)



Հերթական համար _____, Ամսաթիվ __/__/____

1.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի տեսակ				Ընդամենը, ՀՀ դրամ
2.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի քանակ				
3.	Կենսաթոշակային ֆոնդի թողարկված փայերի տեսակ				
4.	Կենսաթոշակային ֆոնդի թողարկված փայերի քանակ				
5.	Կենսաթոշակային ֆոնդի փայի հաշվարկային արժեք (մարման), ՀՀ դրամ				
6.	Կենսաթոշակային ֆոնդի փայի հաշվարկային արժեք (թողարկման), ՀՀ դրամ				
7.	Փոխանակման վճար,%				
8.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի ընդհանուր հաշվարկային արժեք, ՀՀ դրամ				
9.	Կենսաթոշակային ֆոնդի թողարկված փայերի ընդհանուր հաշվարկային արժեք, ՀՀ դրամ				
10.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանցման ենթակա մարման գումար, ՀՀ դրամ				
11.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի մնացորդը գործառնական օրվա բացման դրությամբ, հատ				
12.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի մնացորդը գործառնական օրվա փակման դրությամբ, հատ				

Ընկերության տնօրեն՝ _____ (ստորագրություն)



Ա. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ					
1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար		2. անուն		3. ազգանուն	
4. կենսաթոշակային հաշվի համար					
Բ. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ					
5. փոստային ինդեքս	6. երկիր	7. վարչատարածքային միավոր	8. համայնք (վարչական շրջան)	9. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան	
10. հեռախոսի համար		11. բջջային հեռախոսի համար		12. էլեկտրոնային փոստի հասցե	
Գ. ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՅԵՐԻ ՏԵՍԱԿ(ՆԵՐ) ԵՎ ՔԱՆԱԿ					
Ֆոնդի տեսակ		Ֆոնդի անվանում			Քանակ
Կայուն եկամտի		ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ			
Պահպանողական		ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդ			
<p>Սույն դիմումը/հայտը լրացնելով և ստորագրելով ես՝ ներքոստորագրողս՝</p> <p>հավաստիացնում եմ, որ գիտակցում եմ սույն դիմումը/հայտը ստորագրելու իրավական բոլոր հետևանքները, գիտակցում եմ, որ սույն դիմումը/հայտը ստորագրելով միանում եմ _____ ֆոնդի կանոններին այն խմբագրությամբ, որն ուժի մեջ է իմ կողմից դիմումը/հայտը ստորագրելու պահին,</p> <p>հավաստիացնում եմ, որ ծանոթացել եմ _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ բոլոր այն ներքին իրավական ակտերին, որոնք կարող են որևէ կերպ կիրառելի լինել սույն դիմումի/հայտի հիման վրա ծագող/փոփոխվող/զադարող իրավահարաբերությունների նկատմամբ՝ դրանց բոլոր համապատասխան փոփոխություններով և լրացումներով,</p> <p>հավաստիացնում եմ, որ սույն դիմումի մեջ/հայտում կամ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է և ամբողջական և դրա փոփոխության դեպքում, այդ մասին կտեղեկացնեմ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին, հրաժարվում եմ վիճարկելու՝ _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին իրավական ակտերին ծանոթ լինելու փաստը և պարտավորվում եմ բոլոր և ցանկացած դեպքերում պնդել իմ՝ այդպիսի իրավական ակտերին ծանոթ լինելու հանգամանքը, _____ ֆոնդը կամ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը պատասխանատվություն չեն կրում ցանկացած այնպիսի կորուստների համար, որոնք պայմանավորված կլինեն իմ կողմից _____ ֆոնդի կանոններին և «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ներքին իրավական ակտերին ծանոթ չլինելու հետ:</p>					
Դ. ՄԱՍՆԱԿՑԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ		Ե. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ (ժամ/օր/ամիս/տարեթիվ)			



կապիտալ ասեթ մենեջմենթ

**Ձև 3-15. Կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման
հայտի ընդունման վերաբերյալ տեղեկանք
Հաստատված է**

1.	Մասնակցի անուն, ազգանուն, կենսաթոշակային հաշվի համար			
2.	Հայտի ընդունման ժամ/օր/ամիս/տարի			
3.	Մարման ենթակա կենսաթոշակային ֆոնդի փայերի տեսակ			
4.	Մարման ենթակա կենսաթոշակային ֆոնդի փայերի քանակ			
5.	Մարման եղանակ			
6.	Մարման վճար,%			

Ռեեստրավար՝

_____ (ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Ընկերության տնօրեն՝

_____ (ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)



կապիտալ ասեթ մեներջման

Ձև 3-16. Կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման մասին հաշվետվություն

Հաստատված է

1.	Մասնակցի անուն, ազգանուն, կենսաթոշակային հաշվի համար			
2.	Հայտի ընդունման ժամ/օր/ամիս/տարի			
3.	Հայտի կատարման ժամ/օր/ամիս/տարի			
4.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի տեսակ			Ընդամենը, ՀՀ դրամ
5.	Մարման եղանակ			
6.	Մարման վճար, %			
7.	Մարման գին, ՀՀ դրամ			
8.	Կենսաթոշակային ֆոնդի փայի հաշվարկային արժեք, ՀՀ դրամ			
9.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի քանակ			
10.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի ընդհանուր հաշվարկային արժեք, ՀՀ դրամ			
11.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի մարումից՝ փոխանցման ենթակա գումար, ՀՀ դրամ			

Ռեեստրավար՝

(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)

Ընկերության տնօրեն՝

(ստորագրություն) (օր/ամիս/տարեթիվ)



Հերթական համար _____, Ամսաթիվ __/__/____

1.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի տեսակ				Ընդամենը, ՀՀ դրամ
2.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի քանակ				
3.	Կենսաթոշակային ֆոնդի փայի հաշվարկային արժեք, ՀՀ դրամ				
4.	Մարման վճար, %				
5.	Մարման գին, ՀՀ դրամ				
6.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի ընդհանուր հաշվարկային արժեք, ՀՀ դրամ				
7.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանցման ենթակա մարման գումար, ՀՀ դրամ				
8.	Կենսաթոշակային ֆոնդի մարված փայերի համար փոխանցված գումար՝ ըստ Պահառուի հաշվետվությունների				
8.1.	Հաշվետվության հերթական համար, ամսաթիվ՝ ըստ փայերի տեսակների				
8.2.	Փոխանցված գումար, ՀՀ դրամ՝ ըստ փայերի տեսակների				
9.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի մնացորդը գործառնական օրվա բացման դրությամբ, հատ				
10.	Կենսաթոշակային ֆոնդի փայերի մնացորդը գործառնական օրվա փակման դրությամբ, հատ				

Ընկերության տնօրեն՝ _____

(ստորագրություն)



Ա. ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար	2. անուն	3. ազգանուն
4. կենսաթոշակային հաշվի համար		

Բ. ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

5. փոստային ինդեքս	6. երկիր	7. վարչատարածքային միավոր	8. համայնք (վարչական շրջան)	9. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան

Գ. ԺԱՌԱՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐ

10. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար	11. անուն	12. ազգանուն
13. կենսաթոշակային հաշվի համար		

Դ. ԺԱՌԱՆԳԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

14. փոստային ինդեքս	15. երկիր	16. վարչատարածքային միավոր	17. համայնք (վարչական շրջան)	18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան
19. բանկ, հաշվի համար	20. հեռախոսի համար	21. բջջային հեռախոսի համար	22. էլեկտրոնային փոստի հասցե	

Ե. ԺԱՌԱՆԳՎԱԾ ԿԱՄՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՏԵՍԱԿ(ՆԵՐ) ԵՎ ՔԱՆԱԿ

Ֆոնդի տեսակ	Ֆոնդի անվանում	Քանակ
Կայուն եկամտի	ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ	
Պահպանողական	ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդ	

Զ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԷԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

23. պայմանագրի վավերապայմաններ

